գործը յատուկ ժամանակաւոր միջ–վարչական կոմիտէների միջոցով, որ կազմուելու են Պարենաւորման, Խնամատարութեան ու Ներքին Գործոց Մինիստրութիւնների, Կոօպերատիւների Միութեան և Հայոց Գիւղատնտեսական Ընկերութեան ներկայացուցիչներից:

3) *Թոյլ տալ Մինիստրների Խորհրդին հրատարակել կանոններ ազգաբնակութեանը սերմացուի համար անտոկոս դրամական փոխառութիւն տալու և սերմացուով ու ինվենտարով ազգաբնակութեանը վերադարձ օգնութիւն ցոյց տալու վերաբերեալ:*

4) *Ժամանակաւոր Կոմիտէների չտատների ծախքը հոգալ սերմացուի համար բացած վարկի գումարից:*

(Հաստ. մարտ 29–ին 1919թ.)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ

ՀԱՍՏԱՏԱԾ ՕՐԷՆՔՆԵՐԸ 1919թ. օգ.—1920թ. նոյեմբ.

Հայաստանի խորհրդարանի—Պարլամենտ—օրէնսդրական աշխատանքը եղել է բաւական ընդարձակ ու բազմակողմանի: Նրա ընդունած օրէնքներն ու որոշումները տպւում էին խորհրդարանի հրատարակած *«Օրէնքների Հաւաքածու»*–ի մէջ, որը 1919թ. նոյեմբերից սկսած, լոյս էր տեսնում պարբերաբար:

1919թ. օգոստ. 1–ից մինչև 1920թ. մայիս 5, երբ խորհրդարանը արձակուրդ ստացաւ և այլևս օրէնսդրական աշխատանք չկատարեց, ընդունել ու հաստատել են բազմաթիւ օրէնքներ ու որոշումներ: Դժբախտաբար, մենք հնարաւորութիւն չունենք տալու ամբողջական վիճակագրական տեղեկութիւններ, բայց հետևեալ թւերն իսկ բաւական են ցոյց տալու համար, թէ որքան ուժեղ էր խորհրդարանի գործունէութեան թափը՝ համեմատած խորհրդի հետ. 1919թ. օգոստ. 1–ից մինչև նոյն տարւայ դեկտեմբ. 31–ը խորհրդարանը հաստատել է 117 օրէնք ու որոշում, 1920թ. յուն. 1–ից մինչև նոյն տարւայ ապր. 26–ը՝ 85 — ընդամենը 202 օրէնք և որոշում: Նոյն ժամանակամիջոցում խորհրդարանում լսել են բազմաթիւ յայտարարութիւններ կառավարական և խորհրդարանական յանձնաժողովների կողմից: Մասնաւորապէս լայն տեղ է տրւել գաւառներն ուղարկած խորհրդարանական ընդհանուր յանձնաժողովների զեկուցումներին, որոնք, մի տեսակ, երկրի ուսումնասիրութեան բնոյթ են կրել:

Պէտք է արձանագրել նաև, որ ընդունած օրէնքների և որոշումների խոշոր մասը վերաբերում է նախկին օրէնքների փոփոխութեան ու լրացման և նախահաշիւների քննութեան ու հաստատման:

Առաջ ենք բերում Հայաստանի խորհրդարանի հաստատած կարևոր օրէնքների մի մասը, առանց սպառած լինելու ամբողջ օրէնսդրական նիւթը:

1. Օրէնք Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաքում Ազգագրական – Մարդաբանական Թանգարան–Գրադարան հիմնելու մասին. — 1) *Հայաստանի Հանրապետութեան Մայրաքաղաքում հիմնւում է Ազգագրական–Մարդաբանական Թանգարան–Գրադարան:*

2) *Ազգագրական–Մարդաբանական Թանգարան–Գրադարանին է յանձնւում, իբրև պետական սեփականութիւն, «Հայոց Ազգագրական Ընկերութեան» շարժական և անշարժ ամբողջ գոյքը, համաձայն նրա ընդհանուր ժողովի որոշման:*